

**5.7. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը, հավատարմագրումը
2004թ. հունվար-դեկտեմբերին**

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2004թ. հունվար-դեկտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

Ստանդարտացում: Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 306 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 230 միջպետական, 44 միջազգային և 32 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 411 պայման: Թողարկվել են 13 անուն տեղեկատվական նյութեր՝ ստանդարտների համացանկ, տեղեկատու, տեղեկատվական թերթիկներ:

Սերտիֆիկացում: Տրվել է համապատասխանության 6566 սերտիֆիկատ, այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար՝ 5651, արտահանվող արտադրանքի համար՝ 202 մնացած 713-ը՝ տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 23 հայտ, որից 12-ը՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Հավատարմագրում: ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 17 մարմին և 38 լաբորատորիա (23-ը՝ տեխնիկապես իրավասու և անկախ, 15-ը՝ տեխնիկապես իրավասու):

**Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման
գործունեության հիմնական ցուցանիշները**

	2004թ. հունվար-դեկտեմբեր			
	ընդամենը, միավոր	աճը կամ նվազումը 2001թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), %	աճը կամ նվազումը 2002թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), %	աճը կամ նվազումը 2003թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), %
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	306	47.8	2.9 անգամ	85.5
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	411	16.1	32.2	20.9
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	13	- 27.8	18.2	44.4
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	6566	21.2	26.1	22.0
որից				
ներմուծվող արտադրանքի համար	5651	39.1	38.3	29.6
արտահանվող արտադրանքի համար	202	- 61.0	- 40.4	- 63.9
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	23	- 43.9	- 23.3	21.1
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	38	58.3	2.9 անգամ	2003թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ տարածքում լաբորատորիաներ չեն հավատարմագրվել

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2004թ. հունվար-դեկտեմբերին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի մի շարք տեսակներ:

2004թ. հունվար-դեկտեմբերին անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքը

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի մոդելը, տիպը	Քանակը
Բրազիլիա	Սուրճ բնական, հատիկավոր, չբոված	-	120 կգ
Ռուսաստանի Դաշնություն	Ձկան խավիար (կարմիր)	«Ախ-Կավիար»	2.8 կգ
		«Սախալինսկայա իկորնայա Կո»	4 կգ
		«Պար Սախ»	5.6 կգ
ԱՄՆ	Ատամի մածուկներ Շամպուններ	-	243.582 կգ
		-	76.2 Լ
Անգլիա	Ոչ էթիլացված բենզին	-	46062 կգ
Հայաստանի Հանրապետություն	Պահածոյացված մանրակ, սիբեխ, բանջար ապակյա բանկաներով	-	4500 բանկա
Լատվիա Ռուսաստանի Դաշնություն	Ձկան պահածոներ	«Սելդ տոմատի սոուսուն»	21.84 կգ
		«Սկումբրիա յուղի մեջ»	23.04 կգ
Վաճառող «DORAGI Co Ltd»ՈւԻ	Դիզելային վառելանյութ	-	22880 կգ
Իրանի Իսլամական Հանրապետություն	Դրածե	1704	39 կգ
Հայաստանի Հանրապետություն	Համեմունք	Չորացված ռեհան	...
Ուկրաինա	Կերակրի աղ	2501	132220 կգ